Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
26 նոյեմբերի 2024 թվականի N 479-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի նոյեմբերի 27–ից

«Ակնթարթային idcoin Black Friday-ին ընդառաջ» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 27.11.2024թ-ից 30.11.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **QR վճարում՝** «Իդրամ» ՍՊԸ (այսուհետ՝ Իդրամ) սպասարկման ցանցում ֆիզիկական անձանց կողմից Idram&IDBank հավելվածով (ներառյալ idplus հավելվածը) իրականացված QR վճարում (այդ թվում NFC, QR տեխնոլոգիայով և առցանց կայքերում կատարված QR վճարումները):
1.3 **idcoin՝** հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:
1.4 **Հաճախորդ՝** ցանկացած օգտատեր, ով Idram&IDBank հավելվածով (ներառյալ idplus հավելվածը) կիրականացնի QR վճարում:
1.5 Արշավին մասնակցելու դեպքում հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի: Մասնակցելով արշավին և ընդունելով idcoin-ները «ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաճախորդ չհանդիսացող անձինք տալիս են իրենց համաձայնությունը իրենց անձնական տվյալները՝ եկամտահարկի հաշվարկման և վճարման նպատակով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ին փոխանցելու համար:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ 27.11.2024թ-ից 30.11.2024թ-ը ներառյալ, Idram&IDBank հավելվածով կատարելով QR վճարումներ Իդրամի սպասարկման ցանցում, հաճախորդները կստանան 3% ակնթարթային idcoin կատարված վճարումներից: Ընդ որում, QR վճարման դեպքում 3% ակնթարթային idcoin-ի ստացման համար հիմք են ընդունվելու բանկային հաշիվներով, կից քարտերով, դրամապանակով, idplus կուտակված բոնուսներով/նվեր քարտերով, idcoin-ով, կոմբո տարբերակով, rocket line/rocket line 0%-ով կատարված վճարումները: Վառելիքի քարտով կատարված QR վճարումները չեն դիտարկվելու սույն արշավի շրջանակում:
2.2 Մեկ հաճախորդին սույն Արշավի ընթացքում տրամադրվում է հանրագումարային առավելագույնը 5 000 idcoin (հարկումից հետո): Պետությանը վճարման ենթակա բոլոր անհրաժեշտ հարկերը վճարվում են Բանկի կողմից:
2.3 Որոշ առցանց հարթակներում կատարված QR վճարումների դեպքում idcoin-ը կտրամադրվի 1 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4 Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:
2.5 idcoin-ի տրամադրման և սպասարկման կանոնները տեղադրված է հետևյալ հղմամբ՝ https://idbank.am/upload/iblock/666/noa9o21tx3o9xjdwixalavk3odyu0qj7/IDcoinTC_final.pdf
2.6 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: